ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1955 Общественные науки

Հովհ. Ինճիկյան

Բ. ԿՆՈՒՆՅԱՆՑԸ 1905 Թ. ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՍՈՎԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչ Բոգդան Մինաևիչ (Միրզաջանովիչ) Կնունյանցը եղել է ռուսական առաջին ռևոլյուցիայի ակտիվ մասնակիցներից և ղեկավարներից մեկը։ Ռևոլյուցիայի վերելքի շրջանում, 1905 թվականի աշնանը և ձմռանը նա պարտիայի ԿԿ-ի կողմից ուղարկվել է Պետերբուրգ տեղի բոլշևիկյան կազմակերպությունում աշխատելու։

Հայտնի է, որ մայրաքաղաքի պրոլետարիատը Մոսկվայի ռևոլյուցիոն բանվորների հետ առաջատար դեր խաղաց ռևոլյուցիայի մեջ։

Վ. Ի. Լենինը «Ռուսաստանի գործադուլների վիճակագրության մասին» հոդվածում ցույց է տալիս, որ Ռուսաստանում 2.863 հազար գործադուլավորների ընդհանուր քանակի մոտ 40 տոկոսը կազմում էին Պետերբուրգի ֆաբրիկա-գործարանային օկրուգի բանվորները։

Այդ թիվը բավական համոզիչ կերպով ցույց է տալիս մայրաքաղաքի պրոլետարիատի ավանգարդային դերը ռուսական առաջին ռևոլյուցիայում։

Լենինը «Համառուսաստանյան քաղաքական գործադուլը» հոդվածում, խոսելով այն մասին, որ ռևոլյուցիոն շարժումը ընդգրկել է ամբողջ երկիրը, ժողովրդի բոլոր խավերին և Ռուսաստանում բնակվող բոլոր ազգերին ոտքի է հանել ինքնակալության դեմ, գրում էր. «Մոսկվան ու Պետերբուրգը բաժանել են իրենց միջև ռևոլյուցիոն պրոլետարական նախաձեռնության պատիվը»[1]։

Ի. Վ. Ստալինը, նշելով Ռուսաստանի երկու խոշորագույն պրոլետարական կենտրոնների դերը, 1907 թ. ապրիլին գրում էր.

«Մոսկվայից և Պետերբուրգից էին բխում դիրեկտիվները հունվարյան և հոկտեմբերյան ելույթների ժամանակ, նրանք էին ղեկավարում շարժումը դեկտեմբերյան փառապանծ օրերին»[2]։

Իրենք՝ Պիտերի բանվորների ղեկավարները պարզ և որոշ էին պատկերացնում մայրաքաղաքի պրոլետարիատի դերը ժողովրդական ռևոլյուցիայի մեջ։ Նրանցից Բ. Պետրով-Ռադինը (Կնունյանցը) իր «Պայքար ուղի ժամյա բանվորական օրվա համար» հոդվածում այդ միտքը արտահայտում է հետևյալ բառերով.

«Եթե Ռուսաստանում պրոլետարիատը ամբողջ բնակչության նկատմամբ հանդիսանում է ռևոլյուցիայի առաջնորդը, ապա Պետերբուրգի բանվորները, իրենց բացառիկ դրության շնորհիվ, նույնիսկ անկախ իրենց կազմակերպական կապերի աստիճանից, հանդիսանում էին երկրի բանվոր դասակարգի ղեկավարները աբսոլյուտիզմի դեմ նրա մղած պայքարում»[3]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 9, էջ 501։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 2, էջ 42։

[3] Сборник „Первая русская революция в Петербурге в 1905 г.", изд. 1925, стр. 110.

Ելնելով այս հանգամանքից, պարտիան և անձամբ Վ. Ի. Լենինը առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում Պիտերի վրա։ Կենտրոնական Կոմիտեի անդամների զգալի մասը ռևոլյուցիայի նախօրյակին և ռևոլյուցիայի տարիներին կենտրոնացվել էին այնտեղ։ Այնտեղ էր գտնվում ԿԿ-ի հյուսիսային բյուրոն (մինչև 3-րդ համագումարը) և Կենտկոմը (3-րդ համագումարից հետո)։ Բոլշևիկների Պետերբուրգյան Կոմիտեն մեր պարտիայի հիմնական կենտրոններից մեկն էր, կարևորագույն հենակետերից մեկը՝ մենշևիկների կազմալուծիչ գործունեության դեմ Լենինի և բոլշևիկների մղած պայքարում։

Բ. Կնունյանցը 1905 թ. օգոստոսի վերջին գալով Պետերբուրգ, կոպտացիայի է ենթարկվում Պետերբուրգի Կոմիտեի կազմում և ղեկավարում Կոմիտեի ագիտատորների խումբը։

Ռևոլյուցիայի ամենաբուռն վերելքի օրերին, 1905 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին երևան եկան բանվոր դեպուտատների Սովետները (բացի Իվանով — Վոզնեսենսկու Սովետից, որը ծագել էր դեռ 1905 թ. մայիսին)։ Սովետները հանդես եկան իբրև մասսաների ռևոլյուցիոն շարժման արդասիք և իբրև ռևոլյուցիոն պրոլետարական կազմակերպության հատուկ ձև, գրեթե բոլոր արդյունաբերական կենտրոններում։ Նրանց թիվը հասնում էր մոտ ութ տասնյակի։

Սովետների մասին բավական մեծ գրականություն կա։ Այս հոդվածի նպատակն է ընթերցողին ծանոթացնել Բ. Կնունյանցի երկերին Սովետների մասին, որոնք գրվել են 50 տարի առաջ և գրեթե չեն օգտագործվել մինչև այժմ։

Այդ երկերն են՝ «Բանվոր դեպուտատների առաջին Սովետը», բրոշյուրը (որ լույս է տեսել 1906 թ.) և մի շարք հոդվածները, որոնք հրապարակված են «Новая жизнь» բոլշևիկյան թերթում, «Բանվոր դեպուտատների Պետերբուրգի Սովետի տեղեկագրում» և այլ ժողովածուներում։

«Բանվոր դեպուտատների Պետերբուրգի Սովետի ականավոր ներկայացուցիչներից և ղեկավարներից մեկի»,— ինչպես բնութագրել է Կնունյանցին Ա. Ֆ. Մյասնիկյանը — երկերը կարևոր նշանակություն ունեն ռուսական առաջին ռևոլյուցիայի ընթացքում Սովետների կատարած դերի բազմակողմանի լուսաբանության համար։

Այդ երկերում մենք գտնում ենք մայրաքաղաքի ռևոլյուցիոն պրոլետարիատի օրդանի 50 օրյա պատմության հետաքրքիր մանրամասնությունները։ Բ. Կնունյանցը ոչ միայն Պետերբուրգի առաջին Սովետի դեպուտատն էր, այլև նրա Գործադիր Կոմիտեի անդամը և քարտուղարը։ Բանվոր դեպուտատների Պետերբուրգի առաջին Սովետի անդամների այբբենական ցանկում Կնունյանցի մասին ասված է, որ նա հանդիսանում է «Գործադիր Կոմիտեի անդամ՝ բոլշևիկների պարտիայի կողմից, նրա միջոցով Լենինը կապ էր պահպանում գործադիր Կոմիտեի հետ» [1]։

Սովետի ղեկավարությունը մենշևիկների ձեռքը լինելու պայմաններում պաշտպանել բոլշևիկյան դիրքերը բոլոր հիմնական հարցերում՝ դժվար, բայց պատվավոր խնդիր էր, որը ըստ հնարավորության կենսագործում էին Բ. Կնունյանցը և նրա ընկերները։ Վերջիններս իրենց հիշողություններում ջերմորեն են խոսում Կնունյանցի գործունեության մասին։ Նրանցից մեկը գրել է. «Երիտասարդ և եռանդուն ընկեր Կնունյանցը ամբողջ ժամանակ պայքար էր

[1] Архив Ленинградского филиала ИМЭЛС, фонд 1, дело 5.

մղում Խրուստալևի և մենշևիկների դեմ, առաջադրելով ռևոլյուցիոն պահանջներ և մարտական լոզունգներ»[1]։

Կնունյանցը, ներկայացնելով բոլշևիկներին, ձգտում էր Սովետի ողջ գործունեությունը կապակցել երկրում տեղի ունեցող ռևոլյուցիոն իրադարձությունների և առանձին բանվորական կոլեկտիվների ու մայրաքաղաքի ողջ պրոլետարիատի պահանջների հետ։ Նա մեկն էր այն մարդկանցից, որոնք պահանջում էին զինվել և ղեկավարում էին զենքի ձեռք բերման, բանվորներին զինելու գործը՝ ինքնակալության դեմ պայքարելու համար։

Նա մասնակցելով առաջին Սովետի գործադիր Կոմիտեի աշխատանքին, հստակ պատկերացում ուներ Սովետների կառուցվածքի և գործունեության մասին, դրա համար, չափազանց կարևոր են նրա մտքերն ու դատողությունները տվյալ հարցի մասին։

Կնունյանցը «Բանվոր դեպուտատների առաջին Սովետը» բրոշյուրում մանրամասն նկարագրում է բանվոր դեպուտատների Պետերբուրգի Սովետի գործունեությունը՝ նրա կազմակերպման օրից մինչև իր ձերբակալությունը։

Բանվոր դեպուտատների Սովետները ռևոլյուցիայի ծնունդ էին, ռևոլյուցիոն մասսաների ղեկավարման պատմության մեջ չտեսնված օրգաններ։

Սովետները, նշում է Լենինը, «...ստեղծվում էին բացառապես բնակչության ռևոլյուցիոն խավերի ձեռքով, դրանք ստեղծվում էին ամեն տեսակ օրենքներից ու նորմաներից դուրս ամբողջովին ռևոլյուցիոն ճանապարհով, իբրև ինքնուրույն ժողովրդական ստեղծագործության արդյունք, իբրև հին ոստիկանական կապանքներից ազատված կամ ազատվող ժողովրդի ինքնագործունեության արտահայտություն»[2]։

Քաղաքական ակտիվ կյանքի մեջ ներգրավված աշխատավորության լայն մասսաները բանվոր դասակարգի ղեկավարությամբ գրոհում էին ինքնակալության դեմ, դեմոկրատական ռեսպուբլիկայի հաստատման համար։ Պայքարի պրոցեսում ծագեցին և կոփվեցին ոչ միայն պայքարի ձևերն ու մեթոդները, այլև ռևոլյուցիոն մասսաների կազմակերպությունների ձևերը՝ գործադուլային կոմիտեներից մինչև բանվորական դեպուտատների Սովետները։

Այդ գործում մեծ դեր խաղաց պարտիայի կողմից կատարվող ագիտացիոն-մասսայական և կազմակերպական աշխատանքը։

Կնունյանցը նկարագրում է պարտիական կազմակերպությունների անխոնջ աշխատանքը ռևոլյուցիայի վերելքի պայմաններում, 1905 թվականի աշնանը։ Սեպտեմբեր և նոյեմբեր ամիսները չափազանց փոթորկալի ամիսներ էին։ Անընդհատ տեղի ունեցող գործադուլները ստեղծել էին բացառիկ նպաստավոր պայմաններ քաղաքական ագիտացիոն աշխատանքի համար։ Բանվորները գործադուլների շնորհիվ, շատ ազատ ժամանակ ունեին և այն անց էին կացնում ժողովներում ու միտինգներում, որոնք տեղի էին ունենում ֆաբրիկաներում, գործարաններում, ուսումնական հաստատություններում և այլ վայրերում։ Հոկտեմբերի սկզբին՝ Մոսկվայի տպագրիչների գործադուլին արձագանքեցին Պետերբուրգի բոլոր բանվորները։ Շարժման լայն թափը պահանջում էր ստեղծել մասսաների ղեկավարման անհամեմատ ավելի հարմար և հարմարեցված ապարատ, քան մինչև այդ գոյություն ունեցող կոմիտեները և զանազան հանձնաժո-

---

[1] Архив Ленинградского филиала ИМЭЛС, фонд I, св. 9, д. 92.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, էջ 297—298։

ղովները։ Հենց այդ անհրաժեշտությունն էլ հանգեցրեց Սովետի երևան գալուն, որին առաջին օրերին անվանում էին «Գործադուլային կոմիտե», «Գործադուլային հանձնաժողով», «Բանվորների Միություն» և այլն։

Բանվոր դեպուտատների Պետերբուրգի Սովետը, որ հիմնադրվել էր 1905 թվականի հոկտեմբերի 13-ին, արդեն հետևյալ օրը վերջնականապես ձևավորվեց և ձեռնամուխ եղավ գործադուլի պրակտիկ ղեկավարմանը։ «Նա այնպիսի ազդեցություն ձեռք բերեց բանվորական մասսաների վրա,— պատմում է Կնունյանցը,— որ պարտիական կազմակերպությունները իրենց որոշումները կենսագործելու համար ավելի նպատակահարմար էին համարում դրանք անցկացնել Սովետի միջոցով։ Այդ դժվար չէր անել, որովհետև Սովետի ազդեցիկ գործիչների մեծամասնությունը սոցիալ-դեմոկրատներ էին»[1]։

Խստագույն ընտրականությունը բուն իսկ կազմակերպության դեմոկրատական սիստեմը վիթխարի նշանակություն ունեին մայրաքաղաքի ռևոլյուցիոն մասսաների մեջ Սովետի հեղինակությունը բարձրացնելու համար։

1905 թ. նոյեմբեր ամսին Սովետի դեպուտատների թիվը մի քանի տասնյակից աճեց մինչև 592 մարդու, որոնք ներկայացնում էին 147 ֆաբրիկաներ և գործարաններ, 36 արհեստանոցներ և պրոֆեսիոնալ միություններ։ Դեպուտատների ընդհանուր քանակի կեսից ավելին՝ 351 մարդ մետաղագործներ էին, 57-ը տեքստիլագործներ, 32-ը տպագրիչներ։ Դեպուտատների կազմում կային 6 կանայք։ Սովետի հենց այս կազմը խոսում է մայրաքաղաքի ռևոլյուցիոն պրոլետարիատի այդ օրգանի ներկայացուցչական և դեմոկրատական բնույթի մասին։

Մյուս կողմից՝ երիտասարդ Սովետի ազդեցության և հեղինակության տարածմանը նպաստում էին պարտիական կազմակերպություններն իրենց քաղաքական-մասսայական աշխատանքով, կազմակերպիչներով, կապերով և այլն։

Այսպիսով՝ աշխատավորական լայն մասսաները շուտով իրազեկ եղան Սովետների գործունեությանը։ Հաջողությամբ էին անցկացվում դելեգատների ընտրությունները, ռևոլյուցիոն մասսաները արագորեն կապ էին հաստատում Սովետի հետ։ Այդ նույն ճանապարհով Սովետի որոշումները արագ կերպով հասցվում էին մասսաներին։

Բրոշյուրի հեղինակը միանգամայն արդարացիորեն նշում է... «Եթե չհիմնադրվեր Սովետը, որպես Պետերբուրգի պրոլետարիատի մեջ սոցիալ դեմոկրատիայի տևական աշխատանքի արդյունքը և եթե նա իր ամբողջ գործունեության մեջ չունենար պարտիական կազմակերպությունների աջակցությունը, երբեք սովետը ձեռք չէր բերի այդ հզորությունն ու ազդեցությունը»։

Սովետը, վայելելով 300,000 բանվորների աջակցությունը, գործում էր վստահորեն, գիտակցելով իր դերն ու նշանակությունը։ Նա մասսաների հետ կապված էր իր դեպուտատների միջոցով։ Չնայած նրա նիստերը տեղի էին ունենում դռներից և մայրաքաղաքի խոշոր դահլիճներում, սակայն բոլոր ցանկացողները չէին կարողանում ներկա գտնվել։ Այդ պատճառով էլ ինֆորմացիայի և կապի համար որոշակի նշանակություն ունեին, այսպես կոչված, դեպուտատների ռայոնական ժողովները, որոնք տեղի էին ունենում մայրաքաղաքի բոլոր 7 ռայոններում։ Այդ ժողովները որոշումներ չէին ընդունում, այլ կազմակերպում էին Սովետի որոշումների կենսագործումը։ Յուրաքանչյուր

[1] *Б. Радин*, Первый Совет рабочих депутатов, СПБ, 1906, стр. 8.

ռայոնում գոյություն ուներ ռայոնական Սովետ, որը կապված էր Սովետի Գործկոմի հետ։ Ռայոնական Սովետը ղեկավարում էր գործկոմի անդամը։ Հետևյալ օղակը, Սովետի մասսայական բազան, հանդիսանում էր ընտրողների ժողովը, որտեղ վերջիններս ոչ միայն լսում էին հաշվետվություններ Սովետի մասին, այլև մտցնում էին իրենց առաջարկները, իսկ հաճախ իրենց կամքն էին թելադրում բանվոր դեպուտատների Սովետին, որն իր արտահայտությունն էր գտնում Սովետի գործունեության մեջ։

Հարցերը օպերատիվ կերպով լուծելու նպատակով Սովետի երկրորդ նիստում մայրաքաղաքի ռայոնների, պարտիական կազմակերպությունների, ինչպես և մի շարք պրոֆեսիոնալ միություններն ներկայացուցիչներից ընտրվեց Գործադիր Կոմիտե։ Գործկոմն իր հերթին ընտրեց բյուրո, որն աշխատում էր մշտապես՝ նախագահի, իսկ ավելի ուշ, նախագահի ձերբակալությունից հետո՝ երեք անձից բաղկացած նախագահության ղեկավարությամբ։ Սովետը նիստեր էր գումարում շաբաթը մեկ անգամ, իսկ գործադուլի օրերին՝ ամեն օր։

Սովետի կազմակերպական ողջ կառուցվածքը և աշխատանքը ցույց է տալիս, թե այն որքան դեմոկրատական, ռևոլյուցիոն ու օպերատիվ կերպով էր ղեկավարում ռևոլյուցիոն շարժումը։ Բանվոր դեպուտատների Սովետը հասավ դեմոկրատական ազատությունների փաստական կենսագործմանը։ Նա որոշում ընդունեց ռևոլյուցիոն ճանապարհով ութ ժամյա բանվորական օրվան անցնելու, ժողովների, միտինգների, միությունների, մամուլի ազատության. այդ որոշումների կենսագործմանը վերահսկելու մասին։

Տրեպովի պահանջով ընդունված հոկտեմբերի 12-ի օրենքին հակառակ թույլ չէր տրվում ոստիկանական պաշտոնյաներին՝ մասնակցելու ժողովներին ու միտինգներին։ Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գոյություն ուներ մամուլի լիակատար ազատություն։

Գործադուլների շրջանում Սովետը՝ հնարավորության սահմաններում օժանդակում էր գործադուլավոր բանվորներին և նրանց ընտանիքներին։ Նոյեմբերյան գործադուլի և ձեռնարկատերերի լոկաուտի օրերին Սովետին կից ստեղծվեց գործադուլային ֆոնդ և «գործադուլներին օգնող հանձնաժողովը», որոնց պարտականությունն էր միջոցներ հավաքել և բաշխել կարիքավոր բանվորներին։ Սովետի դեպուտատները պայքարում էին դրամական միջոցների, յուրաքանչյուր կոպեկի ճիշտ ու լավագույն օգտագործման համար, հանդես բերելով իդեալականորեն ազնիվ վերաբերմունք։ Նրանք «լիակատար հնարավորություն ունենալով միջոցներ վերցնել դրամարկղից իրենց շրջագայության համար... ղերադասում էին ոտքով գնալ երբեմն տասնյակ վերստեր, քան ձիաքարշով, որպեսզի խնայեին հանրային դրամի կոպեկները։ Իսկ չէ որ հետևյալ առավոտ անհրաժեշտ էր, որ նրանք դեռ լույսը չբացված վեր կենային՝ աշխատանքի գնալու համար»[1]։

Աշխատանքի այդ ձևերն ու մեթոդները Սովետը դարձրին բանվորների մեջ բացարձակ հեղինակություն վայելող օրգան, բանվորները Սովետի ցուցումով սկսում և ավարտում էին գործադուլները, մասնակցում բողոքի միտինգներին ու ցույցերին, կատարում էին հերոսության ու անձնվիրության հրաշքներ։

Սովետի ազդեցությունը աճում էր օրեցօր։ Նրա հետ հաշվի էին նստում, նրան դիմում ոչ միայն բանվորների, այլև պետական ու առևտրական հիմ-

[1] Б. Радин, Первый Совет рабочих депутатов, СПБ, 1906, стр. 89.

նարկների ծառայողների, ինտելիգենցիայի պրոֆեսիոնալ միությունները։ Նա կապ էր պահպանում պրովինցիաների հետ, երկրի զանազան շրջաններից նրան էին դիմում կազմակերպությունները և անհատները, բանվորական տարբեր խավերի ներկայացուցիչները։ Այսպես, օրինակ, Սովետին դիմել է. 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմի մասնակից, մի ծերունի զինվոր, խնդրելով լուծել իրեն կենսաթոշակ նշանակելու հարցը։ Պոլտավայի նահանգից մի կազակ խնդրել է Ս. Պետերբուրգի «Բանվորական կառավարչությանը» ազդել կալվածատերեր Ռեպինների վրա, որոնց մոտ նա աշխատել էր 28 տարի որպես հաշվետար-դրասենյակային ծառայող, և հեռացվել էր աշխատանքից, իսկ նրա 8 շնչից բաղկացած ընտանիքը մնացել էր անօթևան, առանց կտոր հացի։ Խորհուրդ հարցնելու համար Պետերբուրգ էր եկել Մինսկ նահանգից մի կալվածատիրոջ մոտ հողային աշխատանքներ կատարող արտելի խնդրատարը։ Կալվածատերը խոստացած դրամի փոխարեն ցանկություն էր ունեցել վճարել ինչ-որ մի ձեռնարկության ակցիաներ և խնդրատարը եկել էր տեղեկանալու բանվորական դեպուտատների Սովետից, թե որն էր լավը, այն, որ «բանվոր մարդը ստանա կանխիկ դրամ ոսկով կամ արծաթով», թե ստանա ակցիաներ. «ինչպես ճիշտ կլինի վարվել»։

Սովետը ընդունեց Լեհաստանից եկած պատգամավորությանը, որը իր առջև խնդիր էր դրել հասարակությանը ծանոթացնել այն ծանր պայմանների հետ, որ ստեղծվել էին Լեհաստանում՝ ռազմական դրություն մտցնելուց հետո։ Լեհ ժողովրդի ներկայացուցիչներն իրենց ելույթներում նշում էին, որ լեհական պրոլետարիատը իր շարժման մեջ հետապնդում է նույն ազատագրական նպատակները, ինչ որ հետապնդում է Ռուսաստանի պրոլետարիատը։

Կնունյանցը, իբրև Սովետի Գործկոմի անդամ, իր պատասխան ելույթում հայտարարում է, որ «Ողջ Ռուսաստանի պրոլետարիատի շահերը միասնական են և լեհ բանվորների գործը Ռուսաստանում բնակվող բոլոր բանվորների հարազատ գործն է»[1]։

Նա մայրաքաղաքի պրոլետարիատի և Սովետի անունից խոստանում է աջակցություն լեհական բանվոր դասակարգին։

Սովետը, ի պատասխան Լեհաստանում և երկրի մյուս ծայրամասերում հայտարարված ռազմական դրության և Կրոնշտադտի ապստամբ նավաստիների նկատմամբ կիրառվող գազանային դատաստանի, հայտարարում է բողոքի գործադուլ, որը սկսվում է նոյեմբերի 2-ին և տևում մի քանի օր։

Կնունյանցը պատմում է «մի զարմանալի դեպքի մասին», որը ցույց է տալիս Սովետի ուժը և հեղինակությունը երկրում։ Նոյեմբերի 23-ին Երեկոյան Սովետի գործկոմի նիստի ժամանակ ստացվում է հեռագիր Կուշկա երկաթուղային կայարանից (Միջին Ասիական երկաթգիծ)։ Հեռագրում ասվում էր, որ գործադուլին մասնակցելու համար ռազմադաշտային դատարանը մահապատժի է դատապարտել ինժեներ Սոկոլովին և նրա ընկերներին։ Մահապատիժը պետք է տեղի ունենար նոյեմբերի 24-ին առավոտյան։ Ջնայած կապի դծով աշխատող բանվորների և ծառայողների գործադուլին, այդ հարցին վերաբերվող հեռագրերը անարգել ուղարկվում են դեպի երկրի բոլոր ծայրերը։ Բոլոր տեղերից պահանջում են վերացնել դատավճիռը։ Այդ գործին միջամտում է Սովետը. «երկու ժամ էլ չանցավ,— գրում է Կնունյանցը, երբ ստացվեց

[1] Б. Радич, Первый Совет рабочих депутатов, СПБ, 1906, стр. 67.

մինիստրական հրաման՝ դադարեցնել դատավճռի ի կատար ածելը և վերանայել գործը։ Հեռագրերը այդպես շարունակում էին թռչել ամենուրեք։ Բոլոր հերթական թղթակցությունների առաքումը դադարեցված էր։ Ապարատները զբաղեցված էին Միության կողմից»[1]։

Սովետի գործունեությանը վերաբերող այս փաստերը ցույց են տալիս, թե այն ինչպիսի մեծ հեղինակություն ուներ մասսաների մեջ։

«Հոկտեմբերյան հաղթանակից հետո,— գրում է Կնունյանցը, նկատի ունենալով հոկտեմբերի 17-ի մանիֆեստը և նրա հետ կապված դեպքերը, Սովետի, հետևապես և Պետերբուրգի բանվորների ուժն ու ազդեցությունը հասավ իր դագաթնակետին։ Պայքարի օրգանից Սովետը դարձավ ռևոլյուցիոն իշխանության օրգան»[2]։

Ինչպես արդեն ասվեց վերևում, Սովետը որոշում է ընդունում 8 ժամյա բանվորական օրվա, մամուլի մասին, տպագրում է իր օրգանները իր կողմից դրավված տպարաններում, հետևում է քաղաքում կարգ ու կանոնի պահպանմանը, կանխում սևհարյուրյակայինների կողմից ջարդեր կազմակերպելու փորձերը, առանձնացնում է շենքեր՝ բանվորների, պրոֆեսիոնալ միությունների ժողովների և միտինգների համար, գործադուլների ժամանակ փակում է առանձին ձեռնարկությունները, որոշում է առևտրական ձեռնարկությունների աշխատանքի ժամերը, դրամական օգնություն ցույց տալիս գործադուլավորներին և այլն։ Նա միջամտում է ոչ միայն քաղաքի, այլև ողջ երկրի տնտեսական ու քաղաքական կյանքին։

Համառուսաստանյան փոստ-հեռագրական գործադուլի ժամանակ փոստ-հեռագրատան ծառայողների Միության Պետերբուրգի Կոմիտեն դիմում էր Սովետին՝ օգնություն և ղեկավարություն ստանալու համար։ Եղել են դեպքեր, երբ կառավարությունը, մնալով առանց կապի միջոցների, օգտագործել է երկաթուղային հեռագրատունը։ Այդպիսի դեպքերում Սովետը որոշել է՝ «խնդրել երկաթուղային հեռագրիչներին՝ հրաժարվել հաղորդելու որևէ հեռագիր, բացի պաշտոնական գրագրություններից»։

Կառավարությունը հարկադրված է եղել ճանաչել Սովետի գոյությունը և միաժամանակ թույլ է տվել նրա լեգալ և պաշտոնական գործունեությունը։ Սովետի նիստերի օրերը և տեղը հայտնի են եղել ոստիկանությանը։ Վերջինս չի կարողացել խանգարել և միջամտել Սովետի գործերին։ Սովետի առանձին պահանջները նույնիսկ բավարարվել են կառավարության օրգանների կողմից։

Կնունյանցը մեջբերում է կատարում «Новое время» ռեակցիոն թերթի հրատարակիչ Ա. Սուվորինից, որը 1905 թ. հոկտեմբերին գրում էր, որ Ռուսաստանը հնազանդվում է ոչ թե «օրինական», այլ միությունների կողմից ընտրված «ինքնակոչ կառավարությանը»։ Դրա համար էլ Սուվորինը Սովետը անվանում է «Ռուսական Միութենական կառավարություն», որը իր հիմնարկները ունի ամբողջ Ռուսաստանում, «իր կապերը չի կորցնում գործադուլների ժամանակ — ոչ քաղաքական գործադուլների և ոչ էլ փոստ-հեռագրային գործադուլի դեպքում։ Այն ժամանակ, երբ օրինական կառավարությունը մնում է առանց երկաթուղու, փոստի, հեռագրի, միութենական կառավարությունը օգտվում է այդ ամենից։ Այն ժամանակ, երբ օրինական կառավարությունը չգիտի, թե

[1] *Б. Радин*, Первый Совет рабочих депутатов, СПБ, 1906, стр. 91.

[2] *Б. Петров-Радин*, Борьба за 8-часовой рабочий день, сборник „Первая русская революция в Петербурге в 1905 г.", стр. 110.

ինչ է կատարվում Ռուսաստանում, միութենական կառավարությունը ամեն ինչ գիտի և հրապարակում է իր բոլոր կարգադրությունները։ Երբ օրինական կառավարությունը առաքում է գաղտնի շրջաբերականներ, կամ տպագրում է գաղտնի փաստաթղթեր, միութենական կառավարությունը դրանք հրապարակում է իր ռևոլյուցիոն օրգաններում»[1]։

Սովետի ուժը նրանումն էր, որ ռևոլյուցիոն մասսաները զորավիգ էին հանդիսանում նրան՝ հատկապես ռևոլյուցիայի վերելքի օրերին։ Այդ շրջանում այնքան մեծ էր Սովետի հեղինակությունը, որ նա ցուցումներ էր տալիս և կապ էր պաշտպանում ոչ միայն երկրի առանձին կազմակերպությունների և ծայրամասերի հետ, այլև պահանջներ էր ուղարկում արտասահման, Ստոկհոլմի, Նյու-Յորքի և Լոնդոնի սոցիալիստական թերթերին, որպեսզի Էրիկսոնի հեռախոսային ֆաբրիկայի տեղական բաժանմունքները չկատարեն ռուսական պատվերները մինչև աշխատանքի ընդունվեն ֆաբրիկայից հեռացված պետերբուրգյան բանվորները։ Սովետը նման հեռագիր է ուղարկել նաև Գերմանիա Վեստին-հաուզի ֆաբրիկային[2]։

Սովետն իր այս հեղինակությամբ և աշխատանքի թափով պարտական էր բոլշևիկներին, որոնք հաճախ կոտրելով մենշևիկյան ղեկավարության դիմադրությունը, հենվելով ժողովրդական մասսաների վրա, իրականացնում էին ռևոլյուցիոն միջոցառումներ։

Պետերբուրգի Սովետի գործկոմի անդամ Ն. Նեմցևը իր հիշողություններում գրում է, որ չնայած մենշևիկների և էսեռների կողմից հարուցվող դժվարություններին «Սովետի քաղաքական աշխատանքը տարվում էր գերազանցապես բոլշևիկների ազդեցության տակ։ Սովետի մարտական բանաձևերը, ինչպես դինված ապստամբության կոչը, բանվորների համար սառը զենք կռելու, պատրաստելու կոչը, ապա և մարտական ջոկատներ կազմակերպելը, մի խոսքով, այն ամենը, ինչ բնութագրում է ոտքի ելած ռևոլյուցիոն դասակարգի պայքարը, այդ բոլորը բոլշևիկների գործն էր»[3]։

Մեզ թվում է, որ Պետերբուրգի Սովետի աշխատանքի ընդհանուր գնահատականը տալու ժամանակ պետք է հաշվի առնել այդ հանգամանքը, եթե խոսքը հատկապես վերաբերում է մայրաքաղաքի Սովետի գործունեությանը։

Կնունյանցը բավական շատ և մանրամասնորեն է պատմում Սովետի՝ բոլշևիկների ազդեցությամբ կատարած դրական աշխատանքի, ինչպես և մենշևիկյան ղեկավարների հանցանքով թույլ տրված սխալների ու թերությունների մասին։

Սովետի գործունեության քաղաքական ուղղությունը որոշելիս կարևոր է իմանալ, թե նրա նկատմամբ ինչ վերաբերմունք ունեին բոլշևիկներն ու մենշևիկները։

Մենշևիկները Սովետները համարում էին որպես տեղական ինքնավարության օրգաններ և այդ պատճառով էլ սահմանափակում էին նրա գործունեությունը տեղական և մանր խնդիրներով, ինչ չափով որ այդ նրանց հաջողվում էր։ Հենց այդ դիրքերից էլ ելնելով, նրանք ձգտում էին Սովետը հեռու

---

[1] *Б. Радин*, Первый Совет рабочих депутатов, стр. 24, 25.

[2] *Տես* „Обвинительный акт о членах сообщества, присвоивших себе наименование „С.-петербургский общегородской Совет рабочих депутатов", СПБ, 1906.

[3] „Ленинградская правда", № 349, 20/XII 1930 г.

պահել պարտիական ազդեցությունից և Սովետի գործունեության մեջ անցկացնել անպարտիականության գաղափար։

Բոլշևիկները գնահատում էին Սովետները որպես ռևոլյուցիոն շարժումը ղեկավարող մի օրգան և հատկապես ընդգծում էին «նրանց՝ ռևոլյուցիոն իշխանության սաղմեր լինելու նշանակությունը»[1]։

Այստեղից էլ բխում է Սովետի վրա պարտիայի ունենալիք գաղափարական և քաղաքական ազդեցության խնդիրը։ Սովետի գոյության առաջին շրջաններին այդ հարցը հաճախ էր քննարկվում խորհրդակցություններում, թերթերի էջերում և նույնիսկ իր՝ Սովետի նիստերում։

Բոլշևիկների համար խնդիրը կատարելապես պարզ էր, որ Սովետի գործունեությունը պարտիան պիտի ղեկավարի, որ Սովետը ռևոլյուցիոն մասսաներին պիտի առաջնորդի պարտիայի ցույց տված ուղիով։

Մասնակցելով այս խնդիրների քննարկմանը, Բ. Կնունյանցը գրում էր այդ օրերին. «Առանց չափազանցությունների կարելի է ասել որ, եթե Սովետը մասսաների մեջ այսպես ժողովրդականություն է վայելում, ապա միայն այն պատճառով, որ բազմաթիվ միտինգներում և ագիտացիոն ժողովներում սոցիալ-դեմոկրատիան պաշտպանել է նրա հեղինակությունը, բանվորներին խորհուրդ էր տվել հաշվի առնել Սովետի որոշումները և պաշտպանել նրա առաջադրած լոզունգները։ Սովետն իր քաղաքականության մեջ հետևում է սոցիալ-դեմոկրատիային, դա անվիճելի է»[2]։

Դրա հետ միաժամանակ՝ Կնունյանցը միանգամայն ճիշտ կերպով Սովետը համարում է անպարտիական օրգան, մի կազմակերպություն, որ միավորում է պրոլետարիատի և ամբողջ ռևոլյուցիոն ժողովրդի ներկայացուցիչներին։ Բայց, դրա հետ միասին Կնունյանցին զբաղեցնում են Սովետի դերին վերաբերող վեճերը. կարո՞ղ է արդյոք Սովետը փոխարինել պարտիային, խաղալ քաղաքական ղեկավարի դեր։ Այդ հարցին նա բացասական պատասխան է տալիս «Սովե՞տ թե պարտիա» հոդվածում և հենց այդ հարցադրման մեջ թույլ է տալիս անճշտություն։

Տվյալ հարցի մեջ լիակատար պարզություն է մտցրել Վ. Ի. Լենինը, որը մեջ բերելով վերոհիշյալ հոդվածը, իր «Մեր խնդիրները և բանվոր դեպուտատների Սովետը» հոդվածում ցույց է տվել, որ «ընկեր Ռադինն իրավացի չէ, երբ... հարց է դնում՝ բանվոր դեպուտատների Սովե՞տ, թե՞ պարտիա։ Ինձ թվում է, որ հարցն այդպես դնել չի կարելի, որ լուծումն անպտղման, պետք է լինի՝ և՛ բանվորների դեպուտատների Սովետ, և՛ պարտիա»[3]։

Լենինը սովորեցնում է, որ Սովետը պետք է միավորի բանվորների, գյուղացիների, նավաստիների, զինվորների լայն խավերին և բուրժուական դեմոկրատիայի ներկայացուցիչներին։ Նրա կարծիքով սոցիալ-դեմոկրատները ռևոլյուցիոն մասսաների մի այդպիսի օրգանում՝ պետք է ունենան ամենաակտիվ մասնակցություն և ուղղություն տան նրա գործունեությանը։ Սակայն ոչ մի դեպքում չպետք է պահանջել Սովետից, որ նա ձևականորեն ընդունի սոցիալ-դեմոկրատական ծրագիր կամ մտնի Ռուսաստանի սոց-դեմոկրատական բանվորական պարտիան։

Բ. Կնունյանցը համարյա իր բոլոր երկերում ներկայացնում է Սովե-

[1] Первый Совет рабочих депутатов, стр. VI.

[2] *Б. Радин*, Совет рабочих депутатов или партия? „Новая жизнь", № 5, 1 XI. 905.

[3] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 10, էջ 5—6։

տը, որպես մի անպարտիական ինքնուրույն կազմակերպություն, որը սակայն իր դասակարգային բնույթով պետք է ընթանա սոցիալ-դեմոկրատիայի ցույց տված ճանապարհով։ Մասսաների ռևոլյուցիոն պաթոսի ճիշտ ուղղությունը ապահովելու տեսակետից Սովետը եղել է մասսայական կազմակերպությունների բոլոր հնարավոր ձևերից լավագույնը։

«Բանվորների թույլ կազմակերպվածության դեպքում ուրիշ ոչ մի հիմնարկություն չէր կարող նրան փոխարինել»,— ասում է Կնունյանցը։ Գիտակցելով այդ և օժանդակելով Սովետին որպես անպարտիական կազմակերպության, բոլշևիկները բոլոր միջոցներով ձգտում էին օգտագործել Սովետը բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի խնդիրները կատարելու համար։

Բանվորական դեպուտատների Սովետի գործով տեղի ունեցած դատավարության ժամանակ, Կնունյանցը 1906 թ. սեպտեմբերին արտասանած իր ճառում՝ խոսելով պարտիայի և Սովետի փոխհարաբերության մասին, ցույց էր տալիս, որ բանվորների դեպուտատների Սովետը կազմակերպվել է ՌՍԴԲՊ ազդեցությամբ, որ «պարտիայի դերը Սովետի գործունեության մեջ... հանգում է հետևյալին.

1. Պարտիայի ֆեդերատիվ Սովետը ուշադրությամբ հետևել է Սովետի գործունեությանը և առանձին հարցերի նկատմամբ մտցրել է բանաձևեր, որոնք ընդունվել կամ մերժվել են Սովետի կողմից.

2. Պարտիայի ռայոնական կազմակերպությունները խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցություն են ունեցել Սովետի ռայոնական կոմիտեներում (խոսքը ռայոնական Սովետների մասին է— Հ. Ր.) բացի դրանից կոմիտեն օգտվել է ռայոնական հիմնարկություններից (ակումբներից և այլն)։

3. Պարտիական ագիտատորները օգնել են դեպուտատներին, որ վերջիններս զեկուցումներ տան իրենց ընտրողներին։

Ճիշտ է, Սովետը վարում էր սոցիալ-դեմոկրատական քաղաքականություն, բայց դա չի նշանակում, որ նա եղել է սոցիալ-դեմոկրատական»[1]։

Այդ դատավարությանը վերաբերող լրագրային հաշվետվությունների մեջ մոտավորապես նույն հարցադրումն ենք գտնում պարտիայի և Սովետի փոխհարաբերության մասին։ «Петербургская газета» թերթի 1906 թ. սեպտեմբերի 29-ի համարում ասվում է, որ մեղադրյալ Կնունյանցը կանգ առնելով ՌՍԴԲՊ խնդիրների և նպատակների վրա, մատնանշել է, որ «բանվոր դեպուտատների Սովետը պարտիական օրգան չի եղել, բայց վերջիվերջո նրա և սոցիալ-դեմոկրատական պարտիայի նպատակները համընկնում էին։ Սովետը ռևոլյուցիայի կազմակերպված կենտրոնն էր, նա պայքարում էր լիակատար ժողովրդապետության համար, նա ժողովրդական մասսաների արտահայտությունն էր»։

«Свет» լրագրի նույն թ. սեպտ. 30-ի համարում վկայակոչելով Պետերբուրգի դատական պալատի նիստում ունեցած նույն ելույթը, մատնանշվում է, որ Կնունյանցը «իր հակիրճ, բայց կրակոտ ճառի մեջ նշում է սոցիալ-դեմոկրատական պարտիայի վերաբերմունքը բանվորական դեպուտատների Սովետի նկատմամբ և ցույց է տալիս, որ սոցիալ-դեմոկրատական պարտիան բանվոր դեպուտատների Սովետը համարել է բանվորական մասսաները կազմակերպող կենտրոն, և որպես այդպիսի կենտրոնի իր պարտքն է համարել աջակցել նրան և միշտ անմիջական հարաբերության մեջ է եղել նրա հետ»։

---

[1] Տես Մեղադրական ակտը։

Այս բոլորը, ինչպես և ուրիշ բազմաթիվ ասույթներ ու գրավոր փաստաթղթեր ցույց են տալիս, որ Կնունյանցը ճիշտ է գնահատել պարտիայի և Սովետի փոխհարաբերության խնդիրները, պարտիայի դերը Սովետի գործունեության ծավալման մեջ. և այն զգալի աշխատանքը, որ տարել է Սովետը ինքնակալության դեմ մղվող պայքարում։ Այս պատճառով էլ, երբ հարց են տվել նրան, թե արդյոք մեղավոր է ճանաչում իրեն, որ եղել է Սովետի ակտիվ գործիչ, Կնունյանցը պատասխանել է, որ «իր կարծիքով Սովետի գործունեությունն արժանի է ամբողջ Ռուսաստանի երախտագիտությանը»[1]։

Կնունյանցը Սովետի ծառայությունը համարում է գլխավորապես այն, որ «օգտվելով սոցիալ-դեմոկրատիայի աջակցությունից, մի պարտիայի, որը գիտակցորեն արտահայտում է պրոլետարիատի դասակարգային շարժումը, Սովետը բանվորական առանձին խմբերի ցաքուցրիվ գործունեությունների մեջ մտցնում էր այն ներդաշնակությունն ու ամբողջականությունը, որոնց շնորհիվ հոկտեմբերյան և նոյեմբերյան օրերին իր ինքնուրույն հունովն էր գնում պրոլետարական քաղաքականությունը, որը խիստ տարբերվում էր բնակչության մյուս խավերի քաղաքականությունից»[2]։

Լավ իմանալով թե բոլշևիկների և մենշևիկների մեջ ինչ տարաձայնություններ ու տարբեր մոտեցումներ կան բանվոր դեպուտատների Սովետի գործունեության նկատմամբ, և շարադրելով Սովետի փաստական պատմությունը, Կնունյանցը նշում է այդ տարաձայնությունների սկզբունքային կողմը, ցույց տալով, իհարկե, և այն կոմպրոմիսները, միասնականության ուղղված այն ձգտումը, որն այդ ժամանակ գալիս էր ներքևից ռևոլյուցիոն պրոլետարիատից և արտահայտվում էր պարտիայի գործունեության մեջ։ Հենց այդ ձգտման արտահայտությունն էր պարտիայի 4-րդ միավորող համագումարը հրավիրելը։

Իր «Բանվոր դեպուտատների առաջին Սովետը» բրոշյուրի առաջաբանում Կնունյանցը բերում է մենշևիկների և բոլշևիկների համագումարի բանաձևերի նախագծերը։ Բոլշևիկների նախագիծը, ինչպես հայտնի է, կազմել էր Լենինը, որը թեև չի ընդունվել համագումարի կողմից, բայց լիովին որոշում է բոլշևիկների վերաբերմունքը դեպի Սովետները։

Ամբողջությամբ բերելով այդ նախագիծը Կնունյանցը նկատում է, որ մենշևիկները նեղ են ըմբռնում Սովետների խնդիրները, իսկ բոլշևիկները «քիչ ավելի լայն են դիտում Սովետների խնդիրները»։

Եվ իսկապես, ամբողջ պատմությունը՝ թեկուզ միայն Պետերբուրգի Սովետի պատմությունը, ցույց է տալիս, թե ռևոլյուցիոն բանվորական մասսաների այս օրգանի գործունեության մեջ ինչ վիթխարի հնարավորություններ չի օգտագործել նրա մենշևիկյան ղեկավարությունը։

Որչափ մեծ էին մայրաքաղաքի Սովետի դերն ու նշանակությունը 1905 թ. ռևոլյուցիայի մեջ, որչափ մեծ էր ինքնակալության դեմ Սովետի ղեկավարությամբ գրոհելու պատրաստվող ռևոլյուցիոն մասսաների թափը, այնչափ ավելի ցայտուն էր դառնում Սովետի մենշևիկյան ղեկավարության դավաճանական դերը։ Մենշևիկների հանցանքով, ինչպես այդ երևում է Բ. Կնունյանցի տված բուսաբանությունից, Սովետը տարիների ընթացքում ունենալով մի այնպիսի հզոր նեցուկ, ինչպիսին Պետերբուրգի և հենց ամբողջ Ռուսաստանի ռևոլյու-

[1] Տես „Народ" թերթի 1906 թ. սեպտեմբերի 24-ի համարը։
[2] Տես Борьба за 8 часовой рабочий день.
[3] Տես Վ. Ի. Լենին, Ժողովածու, հատ. 10, էջ 186։

ցիոն պրոլետարիատն էր, նրան զինված ապստամբության դիմելու, կառավարությանը տապալելու ուղղություն երբեք չի տվել, իսկ երբեմն էլ կառավարության հետ բանակցություններ է վարել առանձին խնդիրների շուրջը (ցույցերի ժամանակը փակված գործարանները բաց անելու, և այլ հարցերի վերաբերյալ)։

Բոլշևիկների նախաձեռնությամբ Սովետը զինվորների և նավաստիների մեջ նկատելի աշխատանք էր կատարում, զինվորներին ուղղված կոչեր էր ընդունում, բայց նրանց ռևոլյուցիոն պայքարի մղելու փոխարեն՝ պահանջում էր հեռացնել զինվորներին մայրաքաղաքից։

Սովետը որոշում ընդունեց մամուլի ազատության մասին և հենց այն օրերին, երբ նա կարող էր այդ գործում անհրաժեշտ կարգ սահմանել, թույլ տվեց հրատարակելու բուրժուական և մոնարխիստական թերթեր, որոնք ուղղված էին իր՝ Սովետի գործունեության դեմ։

Մենշևիկյան ղեկավարության դանդաղկոտության ու անվճռականության պատճառով, բոլշևիկների և Սովետի բանվոր-դեպուտատների նախաձեռնությամբ սկսված շատ գործեր հաջողությամբ չէին ավարտվում։ Շատ հաճախ ռևոլյուցիոն բանվորներն իրենց ավելի ճիշտ որոշումներով դրդում էին Սովետին՝ անցնել վճռական գործողությունների, բայց մենշևիկները հետ էին պահում Սովետին այդպիսի գործողություններից։

«Քաղաքական նպատակների իր հարցադրման մեջ,— գրում է Կնունյանցը,— Սովետն իրեն ներկայացնող մասսայից առաջ չէր անցնում։ Գործարանային միտինգներում ընդունվող բանաձևերը հաճախ Սովետի որոշումներից ավելի արմատական էին լինում» [1]։

Անվճռականությունն այնտեղ էր հասնում, որ հաճախ Սովետը կատարված փաստի առաջ էր կանգնում և նույնիսկ այդպիսի ժամանակ վճռական միջոցներ ձեռք չէին առնվում։ Օրինակ՝ ութ ժամյա բանվորական օրվան վերաբերող որոշումը ընդունվել է այն ժամանակ, երբ մայրաքաղաքի մի շարք գործարաններ իրենց մոտ արդեն մտցրել էին կրճատված բանվորական օր։

Սովետը չէր մտածում և ինչպես հարկն է չէր զբաղվում գյուղացիական հարցով։

«Տաք վիճաբանությունները ագրարային հարցի մասին,— գրում է Կնունյանցը,— որ այդ ժամանակ տեղի էին ունենում գործարանային բոլոր միտինգներում սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-ռևոլյուցիոներների միջև, Սովետի նիստին չէին հասնում» [2]։

Բոլշևիկները և նրանց ազդեցությամբ գործող բանվորները մտածում էին գյուղացիության մասին՝ պրոլետարիատի դաշնակցի մասին. մինչդեռ մենշևիկներին այդ հարցը չէր հետաքրքրում սկզբունքային նկատառումներով։ Նրանք գյուղացիությանը ռևոլյուցիոն ուժ չէին համարում։

Սովետների գործունեության այդ բոլոր սխալները բխում էին մենշևիկների քաղաքականության էությունից, այն բանից, որ մենշևիկները նեղ էին ըմբռնում Սովետների դերն ու նշանակությունը, աշխատում էին պարտիայի գծից անկախ ուղղություն տալ Սովետի գործունեությանը։

Սովետի դասակարգային բազայի և դերի այդպիսի նեղ ըմբռնումը պետք է հասցներ և հասցրեց նրա թուլացմանը, մասսաներից կտրվելուն։

---

[1] Первый Совет рабочих депутатов, стр. 15—16.

[2] Նույն տեղում, էջ 94։

Ուշագրավ է և այն, որ Պետերբուրգի Սովետը հաճախ էր քննարկում դեմոկրատական ազատությունների նշանակությունը դասակարգային պայքարի համար։ «Բայց որոնք են այդ պայքարի վերջնական նպատակն ը, այս մասին Սովետը երբեք էլ չի արտահայտվել, թեև վստահությամբ կարելի է ասել, որ եթե հարց հարուցվեր, ապա հսկայական մեծամասնությունը կարտահայտվեր սոցիալիզմի օգտին»[1]։

Այսպիսով, մեծ ու դրական աշխատանք կատարեցին բոլշևիկներն ու նրանց ղեկավարությամբ գործող Պետերբուրգի բանվոր դասակարգը, բանվորական դեպուտատների Սովետի՝ որպես ռևոլյուցիայի ղեկավար օրգանի ստեղծման համար։ Սովետը բոլշևիկների ազդեցությամբ, որոնց ներկայացուցիչներից մեկը Բ. Կնունյանցն էր,— բանվոր դասակարգը մոբիլիզացնելու, նրան կազմակերպելու և ցարական ինքնակալության դեմ պայքարի դուրս բերելու ուղղությամբ զգալի աշխատանք կատարեց։

Բոլշևիկները իրենց համար աննպաստ պայմաններում մինչև Սովետի վերջին օրերը շարունակում էին պայքարը զինված ապստամբության նախապատրաստման ու անցկացման ուղղությամբ՝ հանուն Պրոլետարիատի հաղթանակի։

Պաշտպանելով բոլշևիկյան քաղաքականության գլխավոր գիծը, Կնունյանցը գրում էր. «Ընդհանուր գործադուլի հզոր զենքը մեր ձեռքին է և եթե մենք ժամանակավորապես դադարեցնենք գործադուլը, ապա դա միայն նրա համար կլինի, որպեսզի ավելի մեծ ուժով, ավելի մեծ թափով հարվածենք թշնամուն և համաժողովրդական զինված ապստամբության հզոր պոռթկումով սրբենք դեսպոտիզմի վերջին հետքերը, փշրենք բանվոր դասակարգի և գյուղացիության ստրկության վերջին կապանքները»[2]։

Դեկտեմբերի 3-ի առավոտյան հրավիրվում է ՌՍԴԲՊ ԿԿ-ի, Պետերբուրգի Կոմիտեի և բանվոր դեպուտատների Սովետի Գործկոմի համատեղ խորհրդակցությունը Վ. Ի. Լենինի մասնակցությամբ, որը իր Պետերբուրգ ժամանելուց հետո մոտիկից զբաղվում էր Սովետի հարցերով։ Նախօրյակին, դեկտեմբերի 2-ին փակվել էին այն բոլոր սոցիալիստական թերթերը, որոնք հրապարակել էին Սովետի, պարտիական կազմակերպությունների և միությունների կողմից ընդունված ֆինանսական մանիֆեստը, որով կոչ էր արվում ֆինանսական բոյկոտի ենթարկել կառավարությանը։ Այս բացահայտ ռեպրեսիվ միջոցառումների կապակցությամբ խորհրդակցությունը քննարկում է թերթերի փակման և մասնավորապես բոլշևիկյան «Новая жизнь» լրագրի փակման ինչպես և զինված ապստամբության խնդիրը։

Քննարկվող խնդիրների լենինյան դիրքորոշմամբ բոլշևիկները գնում են Գործկոմի նիստին, որը բացվում է ցերեկվա ժամը 4-ին։

Ելնելով ստեղծված դրությունից՝ երբ կառավարությունը պատրաստվում էր հարձակվել ռևոլյուցիայի վրա, բանտարկել Սովետի ղեկավարներին և ջախջախել ռևոլյուցիոն կազմակերպությունները, բոլշևիկները խնդիր են դնում նախապատրաստել և անցկացնել զինված ապստամբություն։ Մենշևիկները, Լսեռներն ու նրանց կողմնակիցները հակադրվում են այդ առաջարկին։ Գործկոմը ոչ մի որոշում չի կարողանում հանել, քանի որ շատ չանցած նա կալանավորվում է։

---

[1] ерв й Совет рабочих депут: тов, стр. 18.

[2] Известия Совета рабочих депутатов, № 3, 20 X 1905.

Մայրաքաղաքում սկսվեցին ռեպրեսիաներ։ Վ. Ի. Լենինը հարկադրված էր անցնել անլեգալ դրության և շուտով տեղափոխվեց Ֆինլանդիա։ Այդպիսի պայմաններում կատարվեցին բանվոր դեպուտատների Սովետի նոր ընտրություններ։ Նորընտիր Սովետի ղեկավարությունն ամբողջովին ընկավ մենշևիկների ձեռքը։ Նախագահ ընտրվեց Պարվուսը։ Պետերբուրգյան Սովետի այդ երկրորդ կազմը է՛լ ավելի օպորտունիստական դիրք բռնեց և մատնվեց անգործության. նա Մոսկվայի զինված ապստամբության վճռական օրերին չձեռնարկեց անհրաժեշտ միջոցներ Մոսկվայի ռևոլյուցիոն պրոլետարիատին փոխադարձ օգնություն ցույց տալու համար, չնայած Պետերբուրգի բանվորները պատրաստվել էին դրան՝ բոլշևիկների ղեկավարությամբ։

Պետերբուրգի Սովետի գործունեության ընդհանուր գնահատականը տրված է մեր պարտիայի պատմության համառոտ դասընթացում։

«Պետերբուրգի բանվորական դեպուտատների Սովետը, որպես Ռուսաստանի խոշորագույն արդյունաբերական և ռևոլյուցիոն կենտրոնի, ցարական կայսրության մայրաքաղաքի Սովետ, պետք է 1905 թվականի ռևոլյուցիայի մեջ վճռողական դեր խաղար։ Սակայն Սովետի մենշևիկյան վատ ղեկավարության պատճառով նա իր խնդիրները չկատարեց։ Ինչպես հայտնի է, Լենինը այն ժամանակ դեռ Պետերբուրգում չէր, նա դեռևս գտնվում էր արտասահմանում։ Մենշևիկներն օգտվեցին Լենինի բացակայությունից, խցկվեցին Պետերբուրգի Սովետը և գրավեցին նրա ղեկավարությունը։ Զարմանալի չէ, որ այդպիսի պայմաններում մենշևիկներ Խրուստալևին, Տրոցկուն, Պարվուսին և ուրիշներին հաջողվեց Պետերբուրգի Սովետը դարձնել ապստամբության քաղաքականության դեմ։ Զինվորներին Սովետի հետ մերձեցնելու և ընդհանուր պայքարում նրանց իրար հետ կապելու փոխարեն նրանք պահանջում էին զինվորներին Պետերբուրգից հեռացնել։ Բանվորներին զինելու և նրանց ապստամբության նախապատրաստելու փոխարեն Սովետը դոփդոփում էր տեղում և բացասաբար էր վերաբերվում ապստամբության նախապատրաստությանը»[1]։

1905 թ. դեկտ. 3-ին կալանավորվեց Պետերբուրգի բանվոր դեպուտատների առաջին Սովետը։ Ինչպես Կնունյանցն է գրում, շենքը զորքերով և ոստիկանությամբ շրջապատված լինելով՝ դիմադրություն ցույց տալը իմաստ չուներ, բայց ղեկավարների պահանջը՝ չասել իր անունը և ոչնչացնել ամբողջ դոկումենտացիան, կատարեցին բոլորը։ Տեղի ունեցան հարցաքննության և խուզարկության կոպիտ տեսարաններ, բայց ապարդյուն։ Ինչպես նկարագրում է «Северный голос»-ը (լույս է տեսել 1905 թ. դեկտեմբերի 6-ին «Новая жизнь»-ի փոխարեն) հարցաքննությունը տարվում էր այս ոգով.

— «Ի՞նչ է Ձեր ազգանունը.

— Չեմ կարող ասել.

— Դուք սոցիալ-դեմոկրատական պարտիայի անդամ եք։

— Այո։

— Հապա ինչո՞ւ չեք ասում Ձեր ազգանունը։

— Ավելորդ եմ համարում...»[2]։

Դրա համար էլ բանտարկյալների ցուցակում համարների տակ գրվում էին ոչ թե ազգանունները, այլ արտաքին տվյալները—«անհայտ թխահեր», այսինչ հասակի, այսինչ նշաններով։

---

[1] Համ Կ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց. Հայպետհրատ, 1950, էջ 107։

[2] „Северный голос", № 1, 1905.

Երկար շարշարվելուց հետո 257 կալանավորներից հաջողվեց 52 հոգու անձնավորությունը որոշել։

Կնունյանցը այսպես է նկարագրում Սովետի կալանքի պատկերը, երբ արդեն ոչնչացված են եղել բոլոր փաստաթղթերը.

«Իսկ հետո... հետո սկսվեցին ռուս ռևոլյուցիոների համար սովորական դարձած տեսարանները։ Խուզարկության համար գրպաններ դուրս քաշել, ոստիկանների կոպիտ բղավոց, բանտի կարեթներ, մենավոր բանտարկության. ...հոկտեմբ. 17-ի գովաբանված լիբերալ «Կոնստիտուցիան ոչինչ չէր փոխել այդ սովորական տեսարանի մեջ»[1]։ Եվ ռուս ռևոլյուցիոներները շարունակում են պայքարը ինքնակալության դեմ, ցարական բանտում։

Պայքարի ձևերից մեկն էր արհամարհել ցարական օրենքը, ոստիկանությանը, հրաժարվել ցուցմունքներ տալուց։

Կնունյանցը, որ կարճ ժամանակով հետաքննության շրջանում դարձել էր Նիկոլայ Սարդսյանց, Պետրով, Իվանովիչ, մերժել է որևէ ցուցմունք տալ ըստ գործի։

Բայց մյուսների հարցաքննությամբ հաստատվել և մեղադրական ակտում նշվել է, որ ինժեներ Նիկոլայ Սարգսյանը «ոչ միայն եղել է Գործադիր կոմիտեի գործունեության մասնակիցներից մեկը, այլև՝ մի քանի դեպուտատների ցուցմունքով նա եղել է պրեզիդիումի անդամության թեկնածու, և որ նա «...Սովետի նիստերին ռևոլյուցիոն բովանդակության ճառեր է արտասանել և Սովետի կազմի մեջ է մտել որպես ձախ պարտիաներից մեկի ներկայացուցիչ, ըստ որում Սարգսյանցն իր ճառերում համոզել է Սովետի անդամներին՝ պատրաստվել զինված ապստամբության... և ճառեր է արտասանել ոչ միայն բանվոր դեպուտատների Սովետում, այլև գործարանային բանվորների միտինգներում»[2]։

Բանվոր դեպուտատների Պետերբուրգի Սովետի դեպուտատների դատավարությունը ձգձգվեց համարյա մի տարի։

1906 թվականին բոլշևիկները դատական պրոցեսն օգտագործեցին քաղաքական լայն պրոպագանդայի և ինքնակալության դեմ մղվող պայքարի համար։

Պարտիայի Պետերբուրգի կոմիտեն շորս թռուցիկներով հայտնում է մայրաքաղաքի բանվորների բողոքն ու զայրույթը, մերկացնելով կառավարության քաղաքականությունը որպես կամայականության և հալածանքների քաղաքականություն։

Այդ թռուցիկներից մեկի մեջ բանվոր դեպուտատների Սովետի դեպուտատների նկատմամբ եղած դատի առթիվ կարդում ենք.

«Ի դեմս մեր ընտրյալների՝ աթոռին նստած է Պետերբուրգի ողջ պրոլետարիատը։ Դա դեռ քիչ է, ի դեմս նրանց, ցարական կառավարությունը դատում է Ռուսաստանի ողջ բանվոր դասակարգին, որը պայքարի է ելել բռնության և կամայականության դեմ»[3]։

Թռուցիկները բանվորներին կոչ էին անում շարունակել պայքարը այն նպատակների համար, ինչի համար պայքարում էր Սովետը։ Նրանցում պարզ

---

[1] Первый Совет рабочих депутатов, стр. 118.

[2] Տես „Обвинительный акт о членах сообщества, присвоившего себе наименование: С. Петербургский общегородской „Совет рабочих депутатов", С. Петербург, 1906, стр. 22.

[3] Листовки петербургских большевиков 1902—1907 гг., т. 1. Издательство Ленинградского института истории партии, 1939, стр. 427.

երևում են օպտիմիզմը, հավատը բանվոր դասակարգի ապագա հաղթանակի նկատմամբ, չնայած ժամանակավոր պարտությանը։ Բանվորների աչքում Սովետը մնում է որպես երկիրը դեմոկրատորեն կառավարելու կոչում ունեցող օրգան։ «Բանվորներին մի բան մնում է ցանկանալ,— կարդում ենք 1906 թվականի սեպտեմբերի 19-ի թռուցիկում,— որ ապագա ռուսական պառլամենտը կազմակերպված լինի այդպիսի դեմոկրատական սկզբունքներով, ինչպես Սովետը»[1]։

Չնայած այն հանգամանքին, որ Պետերբուրգի Սովետը մենշևիկների մեղքով չկարողացավ լրիվ կատարել իր առաջ դրված խնդիրները, այնուամենայնիվ նա, որպես Պետերբուրգի ռևոլյուցիոն պրոլետարիատի ծնունդ, նկատելի դեր կատարեց նրան ապագա մարտերի համար նախապատրաստելու գործում։ Նրա գործունեության դրական և բացասական փորձը անպայման օգտակար է եղել Սովետների շինարարության մեջ՝ մեր երկրում։ Միանգամայն իրավացի էր Բ. Մ. Կնունյանցը, երբ ռուսական առաջին ռևոլյուցիայի պարտությունից հետո գրել է.

«Խնդիրները, որ պետք է լուծի բանվորների ապագա ներկայացուցչական հիմնարկը, կլինեն շատ ավելի բարդ, քան այն խնդիրները, որոնք լուծում էր հին Սովետը։ Բայց առաջին բանվորական «պառլամենտի» գործունեությանը մոտիկից ծանոթանալը այնուամենայնիվ անհրաժեշտ է բոլոր նրանց, ովքեր ուզում են, որ անցյալի փորձը իզուր չկորչի, անցյալի սխալները չկրկնվեն և նախկին հաջողություններն էլ օգտագործվեն»[2]։

---

[1] Листовки петербургских большевиков 1902—1907 гг., т. I. Издательство Ленинградского института истории партии, 1939, стр. 430.

[2] Первый Совет рабочих депутатов, стр. VIII.